

2521

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱԿԱՆ ԽԱՍՏԻՏՈՒՏ № 1

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԿԱԼՑԻՈՒՄ-ԿԱՐԲԻԴԻ  
Կ Ի Ր Ա Ռ Ա Մ Ա Ն  
ՆՈՐ ՅԵՆԱՆԱԿԸ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱԿԱՆ ԽԱՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱՎԵՏԱԳՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

Լ. КАЗАРЯН

НОВЫЙ СПОСОБ ПРИМЕНЕНИЯ  
КАРБИДА КАЛЬЦИЯ

ПРЕДВОРИТЕЛЬНОЕ СООБЩЕНИЕ НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКОЙ ЛАБОРАТОРИИ  
ЭРИВАНСКОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО  
ИНСТИТУТА

661  
2-15

Կ. Խ Հ Ր Ա Տ Ո Կ Յ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1934

10.06.2015

661  
2-15

24 SEP 2010

Հ 1 ՀԱՅՀ Պալիտեխնիկական ինստիտուտ Խ.

Լ. Դ. ԶՈՐԵԱՆ



ԿԱԼՑԻՈՒՄ-ԿԱՐԲԻԴԻ  
ԿԻՐԱՌԱՄԱՆ  
ՆՈՐ ՅԵՂԱՆԱԿԸ

19125

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՐՈՐԴԱՆՔԻ ՀՍԽՀ ՊՈԼԻՏԽԵՆԻԿԱՆ  
ԻՆՍԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԵՏԱԶՈՒՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1934

Ճ 692

Նվեր Հայաստանի Լենինական Կոմիտասիոնիուրյանը—  
Յրա պայքարի ու հաղթանակների 15 ամյակի առքիվ:

Կոմիտասիան Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կալցիում կարբիդը ծառալում ե քիմիական ար-  
դյունաբերության մեջ իրեն լելանէութ՝ ացետիլեն  
ստանալու համար, վորն արդէունաբերության մեջ  
մեծ կիրառում ե գտել: Լ. Ղազարյանի այս ուսումնա-  
սիրությունը նվիրված է՝ կարբիդը սկզբունքորեն նոր  
լեղանակով ռեակցիաների մեջ մանելուն, մի յեղանակ,  
վորի հայտաբերողը Ղազարյանն է: Իր յեղանակը  
Լ. Ղազարյանը կիրառել ե կետոնների վրա: Ինչպես  
յիրեսում ե աշխատությունից, այդ ասպարիզում նա  
ունեցել ե մեծ հաջողություն: Հավանական ե, վոր  
նրան հաջողվի իր յեղանակը ընդլայնել կարբիդի հետ  
և հակցիայի մեջ մացնելով՝ բացի կետոններից, նաև  
այլ շարքերի պատկանող նյութերի:  
Լ. Ղազարյանի գյուտը կարելի լի գնահատել հե-  
տեյալ կերպ: — այդ միմիայն նոր մեթոդ չե, այլև  
մի նոր սկզբունք, վորը կարող ե սկիզբ տալ բազմա-  
թիվ նոր մեթոդների:

Պրոֆ. Ղամբարյան

Յերեան  
29/3—34թ.

Պատ. Խմբ. Ն. Խանջյան, Ռուսական Գրադարան  
սրբագրիչ՝ Գար. Հայոց առաջնորդ, Հայոց պահական:

Գրավլ. № 8521, հրամ. № 2953, պատճ. 673, միրաժ 1000:  
Հանձնած ե արտադրության առաջնորդ Հայոց թ  
Ստորագրված ե սպառության համար 17 սուրբի 1934 թ

38074-62

ԿԱԼՑԻՒՄ-ԿԱՐԲԻԴԻ ԿԻՐԱԽԱՆ ՆՈՐ ՅԵՂԱՆԱԿԸ  
Neue Methode Zur Einführung des Calciumcarbids  
in Reaktion.

Նախնական հաղորդանք ՀՍԽՀ Պոլիտեխնիկական  
ինստիտուտի գիտահետազոտական լաբորատորիայի:  
Զեկուցված ե ԽՍՀՄ-ի Գիտութիմում, նոյեմբերի  
25-ին՝ Ա. Ղամբարյանի և ՀՍԽՀ-ի Մարքսիզմի-Լե-  
նինիզմի ինստիտուտի բնագիտական սեկցիայի հուն-  
վարի 20-ի նիստում, հեղինակի կողմից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վորոշ նովատակների համար անհրաժեշտ ե ստա-  
նալ մեթիլ-քլորոպրեն: Գրականությունից<sup>1)</sup> հայտնի յէ,  
վոր մեթիլ-քլորոպրենը կարելի լի ստանալ 3 մեթիլ-  
բուտինովց՝ վերջինս դեհիդրատացիայի լենիթարկելուց  
հետ քլորաջրածին ավելցնելով:

Ինչ վերաբերում ե 3 մեթիլ-բուտինովին և ընդ-  
հանրապես ացետիլենակին ալկոհոլներին, վորոնք, բա-  
ցի վերօնիշյալ նպատակից, գործ են ածվում նույնպես  
և ալ ասպարեզներում, որինակ՝ քնարեր նյութեր  
պատաստելու համար, ինչպես՝ իզոպրոպենիլ-պրո-  
պարգիլ-իզոպրոպեն բարեփառը թթուն (J. G. Far-

benindustrie Akt—Ges.<sup>1)</sup>, այդ նյութերն ստանալու  
ձևերը հայտնի լեն սկսած 1914 թվականից (Farbenfabriken  
vorm. Friedr. Bayer<sup>2)</sup>:

Առանձին պատճեններում և աշխատություննե-  
րում նկարագրված բոլոր ձևերը կարելի լի բաժանել  
յերկու հիմնական խմբի: 1 ին խմբին պատկանում ե  
ացետիլենակին ալկոհոլների ստացումը՝ մագնեզիումի  
ացետիլենակին միացության վրա ալդեհիդներով կամ  
կետոններով ազդելով (Jozitsch<sup>3)</sup>):

Ինչ վերաբերում ե 2-րդ խմբին պատկանող լեղա-  
նակներին, ապա վերջիններս նույնպես կարելի լի  
բաժանել յերկու խմբի, վորոնցից 1-ին տիպին պատ-  
կանում են աշխատանքի այն ձևերը, յերբ նախորդը  
պատրաստվում է նատրիումի կամ կալիումի ացետիլե-  
նիդը, վորով ազդում են ացետոնի վրա (K. Hess und  
H. Munderloh<sup>4)</sup>):

Յերկրորդ ձեր առաջին ձևից տարրերվում ե նրա-  
նով, վոր ացետիլենիդների փոխարհն վերցնում են  
ացետոնի նատրիումի միացությունը և նրա վրա ազ-  
դում են ացետիլենով:

Սակայն դուրսթյուն ունեցող բոլոր լեղանակներն  
եւ առանց բացառության, չնորհիվ վատ լիքերի, ինչ-  
պես յերեւմ և ներկա աշխատության մեջ նշանակած  
գրականությունից, նույնպես և վերջերս կատարված  
(Wallace Carothers, Donald Coffman) ուսումնասիրու-  
թյունից, չնազեցած ալկոհոլների ստացումը դարձնում  
են վոչ ձևանատու:

1) C. [1928] II 1823

2) C. [1914] II 1370

3) Bl. [3] 30 210 [1903]

4) B. 51. 377 (1918)

Վերոհիշալ հեղինակների աշխատանքից յերեսում են, վոր դուռը թյուն ունեցող լեզանակները հնարավորություն չեն տալիս չափեցած ավկոնուների լեռը հասցնել վոչ ավելի քան տեսականի 36 %<sup>o</sup> ը: Ավելորդ չեն միջ բերել հիշալ հեղինակների հայտնած այն միտքը, վոր այդ լեզանակներն ավելի ելեգանտ են, քան կերառելի: Չսայած վոր 3 մեթիլ-բութինովի հետագա մշակումը, ինչպիս որինակ՝ դեհիդրատացիան, և ապա մեթիլ-քլորոպրեն ստանալը վոչ մի գժվարություն չեն ներկայացնում:

Դրան ավելացնենք և այն, վոր մինչև հիմա գոյություն ունեցող լեզանակներով աշխատելու գեղղում գործադրվում են անսպիսի նյութեր, ինչպես մահնեղիում-մետաղ-որդանական միացություններն են, նաև բարիում կամ կալիում ացետիլենիդները, ացետոնի նաւուրիումի միացությունը, վորը ստացվում ե (5 ժամ անընդհատ եթերային լուծություն նատրիում-դիդիֆորի փոշին և ացետոնը—10 կամ—20 աստիճանում իրար հետ թափահարելուց) նատրիում-ամիդից, իսկ նատրիում-ամիդ ստանալու գործը կապված է նույնպես միծ գժվարությունների հետ, վորոնք և բարձրացնում են 3 մեթիլ-բութինովի ինքնարժեքը: Մի շարք այլ դեղքերում սեակցիայի ընթացքում գուացող ավկոնուաները տարրալուծվում են քացախաթթվով: 1 գրամ-մոլ (58 գ) ացետոնի փոխարեն վերցվում ե 300—320 գ, նատրիում ամիդով աշխատելու զեպքում սեակցիան տեսում է 12 ժամ, ատպարատուրան բարդ ե, տեղի լի ունենում ացետիլենի մեծ կարուստ, քանի վոր մեկ գրամ նատրիում-ամիդի գեպքում ացետիլենն անց ե կացվում 7 ժամվա ընթացքում՝ ստ կես մթնոլորտ

ճնշման տակ: Զնայած այդ մեծ անհարմարություններին՝ 3 մեթիլ-բութինովը դերմանիալում արտադրվում է տելանիկական մասշտաբով, վոր լերեսում է կատարած (Scheibler)-ի<sup>1</sup>) աշխատանքի մեջ արված այն նշումից, վորի համաձայն իր գերցրած տեխնիկական 3 մեթիլ-բութինովը պարունակում եր 20% քլոր-բենզոլ, վորը, ըստ լերեսոյթին, լուծիչ է հանդիսանում 3 մեթիլ-բութինով ստանալու համար: Ացետիլենային ալիոններ ստանալու այդ ձևերը մեզ համար միանգամայն ձեռնառու եյն: այդ կակ պատճառով անհրաժեշտ եր գտնել 3 մեթիլ-բութինով ստանալու մի նոր լեզանակ, ապա նոր անցնել 3 մեթիլ-բութինովից մեթիլ-քլորոպրեն ստանալուն:

Ինչպես վերևումն ել հիշատակված ե, ացետիլենային ալկոհոլների ստացման բոլոր լեզանակների դեպքում ել գործադրվում եր ացետիլենը կամ իրեն ազատ ացետիլեն, կամ նրանից պատրաստված այս կամ այն ացետիլենիդը (Աց. Կ, Նա):

Այն լեզանակը, վոր առաջարկում եմ յե՞ւ այդ այն ե, վոր ացետոնի հետ սեակցիայի մեջ մատցվում վոչ ացետիլենը կամ նրանից ստացվող ացետիլենիդները, այլ ուղղակի կայցիում-կարբիդը՝ առանց նրանից նախորոք ացետիլեն ստանալու:

Ինչպես պարզվեց, կայցիում-կարբիդը, վորը իրեն մետաղ որդանական միացություն մինչև հիմա ակտիվ եր համարվում միայն ջրի նկատմամբ, կարելի լի ակտիվացնել ստոր միջակում խառնելով կալցիում-կարբիդը նախորոք փոշիացրած կալիում կամ նատ-

1) B. 55. 2903 (1922)

բիում հիդրոքսիդի հետ (ուսումնասիրությունը մ լուս  
հիմքերի հետ շարունակվում է), վորի չնորհիվ և աხ-  
ղի չեւ ունենում ռեակցիան ացետոնի հետ (ուսումնա-  
սիրությունը մ լուս կետոնների և ալդեհիդների հետ  
նույնպես շարունակվում է): Ռեակցիոն պրոցեսի  
հիգրոլիտիկ տարրալուծումից, վորը կատարվում է մի-  
այն ջրով, ստացվում են ացետիլենային ալկոհոլներ,  
այն ե՞ 3 մեթիլբուտինով և 2,5 դիմեթիլհեքսին-  
դիոլ 2,5; Վերջին աշխատանքներից պարզվեց, վոր  
գործադրելով նույն ռեակտիվիտերը, այն ե՞ կալցիում-  
կարբիդը, կալիում-հիդրոքսիդը և ացետոնը, և փոփո-  
խելով ռեակցիալի պայմանները—կարելի յեւ ստանալ  
կամ 3 մեթիլբուտինով՝ տեսականի 70% ի լեկով,  
կամ 2,5 դիմեթիլհեքսին-դիոլ 2,5—տեսականի 74% ուժի  
(Վերջինս, նատրիում-ամիդով աշխատելու դեպքում  
1 գմ. մոլի փոխարեն ստացվում է 2,5 գմ., այն ե՞  
1,87%),

Աշխատելու այս նոր լիդանակը, լիթե այդ համե-  
մատելու լինենք գոյություն ունեցող մյուս լիդանակ-  
ների հետ, հետևյալ առավելություններն ունի,

1. Ապարատուրան զգալի չափով սարգեցվում է,  
քանի վոր այս դեպքում հասուն ապարատուրալի կա-  
րիք չի լինում, ինչպես և կարբիդից ացետիլեն ստա-  
նալու, նույնպես և ստացված ացետիլենը մաքրող  
լվացարանների և մաքրող խառնուրդների կարիք չի  
լինում:

2. Թանգարժեք նատրիում-ամիդը փոխարինվում  
է կալիում-հիդրոքսիդով, կամ նատրիում-հիդրոքսի-  
դով:

3. Այս ռեակցիալի համար գործադրվում է կար-  
ցիում-կարբիդի փոշին, վորի կիրառումը տեխնիկա-  
ցում վոչ միաւն կազմած և մեծ գժվարությունների  
հետ, այլև շատ հաճախ անհնարին և լինում ոգտա-  
գործել այն՝ ացետիլեն ստանալու նպատակով:

4. Գործադրվող ացետոնի քանակը պակասեցվում  
է 5–6 անգամ, քանի վոր իմ յեղանակով կերպում  
և ուղիղ 1 գրամ մոլ (58 գ)–300 գ-ի փոխարեն:

5. Ռեակցիայի տևողությունը կրճատվում է դար-  
ձյալ 5–6 անգամ, 12 ժամի փոխարեն՝ 2 ժամ:

6. Յեվ, վերջապես, վոր ամենից կարևորն է, այդ  
այն է, վոր լիքը բարձրանում է, մինչև հիմա յեղած  
36% ի դիմաց նենենք տեսականի 70% ը:

Ավելորդ չի լինի նշել նոր լիդանակի մի շարք այլ  
առավելությունները, ինչպես ռեակցիոն խառնուրդի  
10-ից մինչև 20% սահեցման անհրաժեշտության վե-  
րացումը, եթերի մեծ տնտեսումը, քանի վոր 2 լիտրի  
փոխարեն ռեակցիայի ընթացքում իմ առաջարկած  
լիդանակով վերցվում են միայն 200 գ և հիդրոքսի-  
համար գործադրվող 1 գմ.—մոլ քացախաթթվի փո-  
խարեն վերցվում է ուղղակի ջուր:

## ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Ինչպես վերելում տասցի, իմ լիդանակով ացետիլե-  
նային ալկոհոլներն ստացվում են կալցիում-կարբիդի  
և կալիումի կամ նատրիում-հիդրոքսիդի փոշիները  
խառնուրդին եթերալին միջավայրում ացետոն ավելաց-  
նելուց և գոյացող միացության հիդրոլիտիկ ձեղքու-  
մից:

Այն պատճառը, վորն ինձ ստիպեց փոքքել ուեակցիան կալցիում-կարբիդի հետ, բղխում եր ինթագրություններից, վորոնք զեռ փոքքնական սառւզումների կարիք են զգում:

Անկախ այն բանից, թե ինչ չափով կճշտվեն հետազոտում այդ թեորետիկ լենթաղրությունները, նրանք արդեն տվիլ են այն դործնական արդյունքը, վոր նկարագրված ե այս աշխատության մեջ, տալով պարզ, նոր լեզանակ՝ ացետիլենալին ալկոհոլներ և, մասնավորապես, 3 մեթիլ-բուտինոլ և 2,5 դիմեթիլ-հեքսին-գիռլ 2,5 պատրաստելու համար:


Ունենալով այն լենթաղրությունը, վոր կալցիում-կարբիդի տարրալուծումը ջրով անցնում է տատիճանաբար և առաջին հերթին սեակցիան կատարվում է հետեւալ ձևով:




իս միաժամանակ ընդունում եմ, վոր կալիում-հիդրոքսիդը ևս պետք ե կարողանա կալցիում-կարբիդի հետ սեակցիայի մեջ մասնել հետեւալ ձևով:




Քանի վոր մեկ մոլ կալցիում-կարբիդն ացետոնի հետ սեակցիայի մեջ լրիվ մտցնելու համար բավականանում է մեկ գրամ մոլ կալիում-հիդրոքսիդ, հենց դրանով ել բացատրվում ե վերևում հիշվածը: Հետեւաբար ամերոջ սեակցիայի ընթացքը կալցիում-կարբիդի, կալիում-հիդրոքսիդի և ացետոնի միջև, 3 մեթիլ-բուտինոլի գոյացման դեպքում ստանում է կամ առաջին, կամ յերկրորդ ձևը:




Վորը ջրից տարրալուծվում է հետեւալ սխեմայով՝ տալով 3 մեթիլ բուտինոլ՝



իսկ գիռլի համար հետեւալ ձևով՝ քանի վոր առաջին մասը մնում է անփոփոխ:



Վերջինիս հիգրոլիդը կատարվում է ստորև վրած ձևով՝ տալով 2,5 դիմեթիլ-հեքսին-գիռլ 2,5,



Սույն աշխատությանս ընթացքում առանձին գիւղական ցուցումների համար հայտնում եմ խորին շնորհակալությունս իմ սիրելի ուսուցիչ՝ պրոֆեսոր Ստեփան Ղամբարյանին:

Մեակցիայի հաջող ընթացքը կախված եր ընտրած պայմաններից, վորոնց փոքր փոփոխությունը, ինչպես եթերի ավելցուկը, բարեխառնության փոփոխումը և այլն, զգալի կերպով իջևնում ե յելքը: Փորձնական մասում նկարագրված այդ պայմանները հշպրիտ ուսումնասիրելու գործում ինձ լայն աշակցություն են ցույց տվել: Ս. Սավոնօքսեր, Ա. Բարայանը, Գ. Թադէ վոյսանը յեվ Խուրեն Մելիքյանը, վորոնց նույնպես հայտնում իմ իմ շնորհակալությունը:


**ԾԱՆՈՒԹՅՈՒՆ:** Մեր լաբորատորիայում ծագել ե նույն այն յենթազրությունը, զոր ուսակցեայի ընթացքը բացատրելի յե գոանում նույն հասկյալ ձեռփ. կարիում—հիգրոֆուզիզ տալիս ե վոչ թե ացետիլենի, այլ ացետոնի կալիումակա՞ց միացությունը, և այդ ուսակցիան կատարվում է կալցիումկարբիզի ջուր իր նորու հասկության ազդեցության շնորհիվ: Դրանից դոյացող ացետիլենը կամ վերեւում յենթազրված կես չափով հիգրոֆուզի յենթարկված կարիում միանում և ացետոնի կալիումական միացության հետ և տալիս ե վերեւում նկարագրված նյութերը:

## ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՍ

### ՓՈՐՉ Հ 1



3. մերի լրացքնով յեվ 2,5 դրամերի հետևի ավելցուկի դիպեում ապահատութան, վորոնց յես ոգովում ելի այս նպատակի համար, ցույց ե արված ստորև: Կազմված ե՝ Հ 1 կոլրից, վորի մեջ տեղավորվում ե



1 զրամածու ացետիլեն պարունակող կարբիզի և 1 գրամ-մոլ կալիում-հիգրոֆուզիզի փոշիների խառնուրդը, և 3 կոլրից, վորի մեջ գտնվում ե ացետոն, մոռագորապես 400 գ (ացետոնի ավելացուկը վեցնում եմ իրեւ լուծիչ): Հ 2 կաթեցնող ծաղարից, վո-

րի մեջ գտնվում է 300 գ ջուր, և № 4 գազոմետրից  
Ացետոնը նախորոք պաղեցվում է սառցաջրի մեջ,  
և № 1 կոլբից մեկ ժամվա ընթացքում փոքրիկ բա-  
ժիններով կալիում—հիդրոքսիդի և կալցիում կարբի-  
դի խառնուրդը գցում ենք ացետոնի մեջ, վորը գտն-  
վում է № 3 կոլբում։ Վերջինս վերեի մասով սառեցու-  
ցիչի միջոցով միացված է գազոմետրի հետ։ Այդ ար-  
վում է այն նպատակով, վոր մի կողմից՝ սեակցիալի-  
քուն լինելու հետևանքով գոլորշիացող ացետոնը վե-  
րադառնա սեակցիոն կոլբի մեջ (սառեցուցիչն ավելորդ  
և դառնում, յեթե սեակցիոն կոլբը սեակցիալի սկզբից  
մինչև վերջը պաղեցվում է սառցաջրով) և մյուս կող-  
մից՝ հիդրոլիզի հետևանքով առաջացող ացետիլենի  
քանակը չափելու համար։

Ամբողջ փոշին ացետոնի մեջ տեղափոխելուց հետո,  
վորը, ինչպես ասացի, տեսում է մոտ մի ժամ, սեակ-  
ցիան գեռ շարունակվելու հետևանքով, սեակցիոն  
խառնուրդն այդ վիճակում թողնում ենք ևս յերկու  
ժամ, վորից հետո № 2 կաթեցնող ձագարից սեակ-  
ցիոն խառնուրդի վրա ավելացնում ենք 300 գ ջուր՝  
ստացված նյութը և սեակցիալի մեջ չմտած կալցիում  
կարբիդը հիդրոլիզի յենթարկելու համար։ Սակայն  
ջուր տարրալուծելու ժամանակ անջատված ացետիլե-  
նի քանակն այնքան չնշին է, վոր կարելի է այն  
նկատի չառնել և համարել, վոր գործնականորեն ամ-  
բողջ կալցիում-կարբիդը մտնում է սեակցիալի մեջ։

Ջուրն ավելացնելուց գորանում է 3 շերտ՝ 1-ին—  
ացետոնի շերտ, վորի մեջ զտնվում է 3 մեթիլ-բու-  
տինոլը և 2,5 դիմեթիլ-հեքսին-դիոլի 2,5-ը. 2-րդ  
ջրալին շերտ, վորի մեջ շատ քիչ քանակությամբ

լուծված և լինում 1-ին շերտից, և 3-րդ—նստվածք  
կոլբի պարունակությունը քամում եմ նյութաչեցի մի-  
ջոցով, նստվածքը լվանում եմ քիչ քանակությամբ  
ջրով և հեթերով, վորից հետո ացետոնի շերտը բաժան-  
վում է ջրալին շերտից բաժանող ձագարի միջոցով։

Ացետոնի շերտը չորացնելուց հետո յենթարկում  
եմ թորման՝ մոտ 50 սմ յերկարություն ունեցող գե-  
ֆլեքմատորի միջոցով։

95-մինչև 100 աստիճան թորվաղ ֆրակցիա ներկա-  
յացնում է 3 մեթիլ-բուտինոլը, վոր ապացուցվում է  
նրա արծաթի աղի ստացումով։ Այսպես, որինակ, 1,5  
գ 3 մեթիլ-բուտինոլից 3,44 գ արծաթի աղի գոխա-  
րեն ստացվում է 3,05 գ։ Յելքը հավասար է 5 1 գ-ի,  
վորը համապատասխանում է տեսականի 61,36 %-ին,  
ինչպես հաջող առնելով, վոր այդ 5 1 գ-ից վերցված  
նմուշից ստացել եմ 3,44 գ արծաթի միացության փո-  
խարեն 3,05 գ։

Հաջորդ ֆրակցիան թորվում է 198-ից մինչև 220  
աստիճանում, վորը մի քիչ մնալուց կրիստալնում է։  
Անջատված կրիստալները մաքերլուց հետո կշռում են  
18,5 գ, հալման կետով ( $94^{\circ}$ ) համապատասխանում են  
2,5 դիմեթիլ-հեքսին-դիոլ 2,5-ին։ Հեքսին-դիոլը  
կրիստալնում և տոլուոլից, քսիլոլից, նուլինիսի հա-  
ջողվել է ստանալ 5,5 սմ յերկարության և 0,5 սմ  
լայնության կրիստալներ 2,5 դիմեթիլ-հեքսին-դի-  
ոլ 2,5-ի, յելքը հաշված ացետիլենի վրա, վորը չի  
մտել 3 մեթիլ-բուտինոլի ձևով, կազմում է տեսակա-  
նի 34,50 %-ը։

Յ մեթիլ-բութինոլ ստանալը

Ցերկու լիտր տարողություն և կլոր հատակ ուշնեցող կոլրի մեջ նախորոք լցվում և մեկ գ. մոլ ացետիլեն պարունակող կալցիում-կարբոդի (100գ) և 1 գ. մոլ (56 գ) կալիում-իտրոքսիդի լավ մանրացրած խառնուրդը՝ 150 գ կալցիում քլորիդով չորացրած եթերի հետ միասին:

1,5 ժամվա ընթացքում այդ խառնուրդին մասնաւ ափելացվում և 58 ացետոն: Ռիակցիոն խառնուրդը պաղեցվում և սաոցաջրով և միաժամանակ լենթարկվում և լավ թափահարման: Ացետոնն ավելացնելուց նկատվում և թե եթերային շերտի գունավորում և թե նստվածքի ամբացում: Վերևում նշված ամբողջ ացետոնն ավելացնելուց հետո ռեակցիոն խառնուրդը վորոշ ընդիլումներով թափահարվում և ևս 2 ժամ, վորից հետո սաոցաջրի մեջ առանց թափահարելու մնում և մինչև հաջորդ որր:

Հաջորդ որը սաոցաջրով պաղեցրած ռեակցիոն խառնուրդը 150 մլ<sup>3</sup> սաոցաջրով հիդրոլիզի ին ընթարիվում: Տարախուժումից գոյացած քիչ գունավոր եթերային շերտը բաժանվում և նստվածքից: Նստվածքը նյուցեյից քամելուց հետո լվացվում և ջրով, ապա մի քանի անգամ եթերով: Ջրալին ֆիլտրատը աղաթթվով չեղոքացնելուց հետո հաղեցվում և սեղանի աղով, ապա եթերի հետ թափահարելուց հետո իբրև անպետք քան թափիվում եւ:

Ինչպես վիրջին, նույնպես և մինչ այդ ստացված եթերային լուծույթները կալցիում քլորիդով չորացնելուց հետո թորվում են լուղարին բաղնիսի միջոցով՝ լավ գեֆլեզմատորով:

90°—98° թորվել և 60 գ Յ մեթիլ-բութինոլ Արծաթ նիտրատի ամոնիակալին լուծույթը ստացված հեղուկը նստեցնում և իրրե Յ մեթիլ-բութինոլի արծաթի աղ, վորը ինչպես հայտնի լի, պալիթուցիկ և թորումից 110°—200° արգեն հավաքվել և ևս 2 գ նյութ, վորը գեռ չի ուսումնասիրված, իսկ 200°-ից բարձր հավաքվել և ևս 4 գ խեժ, վորը չի կրիստալանում:

Սառուցելու համար, վոր իրոք 90°—98° թորվող ֆրակցիան Յ մեթիլ-բութինոլ և, նրանից ստացված արծաթի աղի վորոյ քանակությունը, քլոր չպարունակող աղոտական թթվով տարրալուծելուց հետո, կշռված նյութի մեջ վորոշել ևմ արծաթի քանակը արծաթ քլորիդի ձևով: Ցնթե ընդունենք, վոր Յ մեթիլ-բութինոլի մեկ մոլեկուլը ռեակցիայի մեջ և մանում մեկ մոլեկուլ արծաթ նիտրատի հետ, ապա վերցված 0,2770 գ Յ մեթիլ-բութինոլի արծաթի աղի տարրալուծումից պետք և ստացվեր—0,20788 գ արգենտում քլորիդ—0,1564 արծաթ—100%, Ստացված և—0,2043 գ արգենտում քլորիդ—0,1537 արծաթ 98,27%:

2,5 գիմեթիլ-հեքսին-դիոլ 2,5 ստանալը  
Դարձալ Յ լիտր տարողություն և կլոր հասակ ուշնեցող կոլրի մեջ լցված 100 րամլ կալցիում քլորիդով

Հորացված եթերի և մեկական, գրամով լավ մանրացրած կալցիում-կարբիդի և կալիում-հիդրոքսիդի խառնուրդին մեկ ժամվա ընթացքում, փոքր բաժիններով, ավելացվել ե 58 գ ացետոն:

Անակցիօն խառնուրդը լավ թափահարվել է, իսկ բարեխառնությունը ունեցիալի սկզբից մինչև վերջը լիղել ե 7: Անակցիայի ընթացքում ունեցիոն խառնուրդի ամբանալու հատեանքով, վորք զրկում եր թափահարելու հնարավորությունից, ավելացվել ե ևս 70 մլ<sup>3</sup> եթեր: Ամբողջ ացետոնը ավելացնելուց հետո ունեցիոն խառնուրդն ընդմիջումներով թափահարվել ե ևս 3 ժամ: Անակցիոն խառնուրդը, վորք բարեխառնությունը լիղել ե 13–15°, սկսեց քիչ կարմրել և ուշչել և ապա ամբողջովին պնդացավ, մի բան, վորչեր նկատվում 3 մեթիլ բութինու ստանալու ժամանակ:

Հաջորդ որը ունեցիօն խառնուրդը տարրալուծվել ե 150 մլ<sup>3</sup> ջրով և 2°-ում:

Անջատված եթերային շերտը նստվածքից բաժանելուց հետո նստվածքը քամվել և լվացվել ե ջրով, ապա եթերով: Զրային ֆիլտրատի աղաթթվով չեղուքացնելուց և սեղանի աղով հաղեցնելուց հետո, եթերով դուրս ե բերվել նրա մեջ լուծված 2,5 դիմեթիլ-էթինի դիում-դիուլ 2,5-ը:

Ունեցած ըոլոր եթերային լուծութները կալցիում-քլորիդով չորացնելուց հետո լուղային բաղնիսով լինթարկվել ե թորման: Յ մեթիլ բութինն ստացվել ե ընդամենը 3 գ: Զմաքրված, բաց կրիստալական 2,5 դիմեթիլ-էթինի-դիուլ 2,5 յելքը հավասար եր 52 գ տեսականի 74%՝ հաշված ացետոնի վրա: Մաքր-

ված 2,5 դիմեթիլ-էթին-դիուլ 2,5-ի հալման կետն ե 94°: Հում պրոզուկտը կարելի լի մաքրել սովորական ընդդինով:

## РЕЗЮМЕ

В настоящей работе излагается новый, предложенный мною, способ получения ацетиленовых алкоголей, который от старых, изложенных в статье способов отличается тем, что тут впервые в реакцию с ацетоном вводится карбид кальция непосредственно, без промежуточного получения из него ацетилена. Преимущество нового способа, в сравнении с существующими до сих пор, заключается в упрощении аппаратуры, замене амидов щелочей их гидроокисями, сокращении продолжительности реакции и, наконец, значительном повышении выходов, как для 3. метил-бутин (1)-ол (3) а, так и для 2,5 диметил-гексин (3)-диол-2,5-а.

## ZUSAMMENFASSUNG

Es wird ein neues Verfahren zur Darstellung der Acetylen alkohole und zwar 3-Methyl-butin (1)-ol-3 und des 2,5-Dimethyl-hexin (3)-diol-2,5 beschrieben, welches sich von allen übrigen Verfahren dadurch unterscheidet, dass das Calciumcarbid als solches angewandt wird. ohne es vorher in Acetylen überzuführen. Die Reaktionsfähigkeit des Calciumcarbids gegenüber Aseton wird durch die Zumisc-

hung des pulverförmigen Kaliumhydraxyd erreicht. Die Vorzüge des neuen verfahrens bestehen in der vereinfachten Apparatur, in dem Ersatz des Natriumamids durch Kaliumhydroxyd, bedeutender verkürzung der Arbeitszeit, in der sparung am Aether als Lösungsmittel und schliesslich in der Erhöhung der Ausbente.

### ԼՐԱՑՈՒՄ

Սուլդելու համար արված եւ այս լենթագրությունը, վոր ացետոնի կալիում հիդրօքսիդի և կալցիում-կարբիդի միջև ռեակցիան տեղի յէ ունենում առաջին հերթին կարբիդի և կալիում-հիդրօքսիդի միջև, ացետոնի փոխարեն վերցված եւ յեղել բենզո-ֆենոն-թրբեկեռն, վորն իր կարբոնիլին հարեան ածխածին-ների մոտ ջրածին չունենալու պատճառով չեր կարող տալ ենու ձև։ Հետևապես բենզո-ֆենոնը կալիում հիդրօքսիդի հետ կալիումական միացություն չեր կարող տալ։

Փորձերը ցուց տվին, վոր ռեակցիան բենզո-ֆենոնի հետ այնուամենախիվ անցնում եւ ացետոնի նման՝ առաջիրեն ռեակցիոն պրոցեսում՝ 1.1.4.4 ռետրաֆենիլ բուտին 2 դիոլ 1. 4.  $(C_6H_5)_2.C(OH).C\equiv C.C(OH).(C_6H_5)_2$ .

Այսպիսով ապացուցված ե, վոր կալիում հիդրօքսիդն առաջին հերթին միանում ե կարբիդի հետ։

Կան եւրիշ ապացուցներ, վոր կարբիդը սառը պայմաններում միանում ե չոր կալիում հիդրօքսիդի հետ, այս ուղղությամբ ուսումնասիրությունը շարունակվում է։

### ДОПОЛНЕНИЕ

В состоящей из ацетона, карбида кальция и гидроокиси калия, реакционной смеси, реакция в первую очередь происходит между гидроокисью калия и карбидом кальция. Для доказательства этого предположения, ацетон был заменен бензофеноном. В последнем, при непосредственно связанном с карбинольной группой, атоме углерода нет атомов водорода, благодаря чему энольная форма исключается. Бензофенон, следовательно, с гидроокисью калия не может дать калиевого соединения. Несмотря на это, реакция между бензофеноном, карбидом кальция и гидроокисью калия протекает совершенно аналогично реакции с ацетоном и дает в качестве продукта—1, 1, 4; 4—тетрафенил-бутин (2)-диол-1, 4 ( $C_6H_5)_2.COHN.C\equiv C.COHN.(C_6H_5)_2$ .

Таким образом, доказано, что уже на ходу гидроокись калия дает продукт соединения с карбидом кальция. Помимо изложенного, имеются также и другие доказательства правильности данного механизма реакции, исследование которых пока не закончено.

### ANHANG

Die Reaktion findet zunächst zwischen Kaliumhydraxyd und Calciumcarbid, und nicht etwa zwis-

chen Kaliumhydroxyd unb Aceton statt. Zum Beweise wird Aceton durch Benzopheron ersetzt. Die der carbonylgruppe benachbarte kohlenstoffatome besitzen im Benzophenon keine Wasserstoffatome, wodurch die Enolform ausgeschlossen wird. Benzophenon kann folglich mit Kaliumhydroxyd keine Kationverbindung liefern. Die Reaktion zwischen Benzophenon Calciumcarbid und Kaliumhydraxyd vorläuft trotzdem völlig analog der Reaktion mit Aceton und liefert 1, 1, 4, 4 Tetraphenyl—butin (2)-diol (1,4) ( $C_6H_5$ )<sub>2</sub>·C(OH)<sub>2</sub>·C≡C·C(OH)<sub>2</sub>·(C<sub>6</sub>H<sub>5</sub>)<sub>2</sub>.

Dadurch ist es bewiesen, dass Kaliumhydraxyd tatsächlich bereits in der Kälte Anlagerungsprodukte an Calciumcarbid liefert. Dafür gibt es bereits auch andere Beweise, die noch weiter verfolgt werden.



«Ազգային գրադարան



NL0292512

26. 4. 92

ФИЛЬМ  
ЦЕНА 1 Р.

821



Л. КАЗАРЯН  
Новый способ применения  
Карбида кальция

Гиз ССР Армении. Эривань, 1934.